8 Յաւէտ կեցցեն ծն երջանիկ,
Կացցեն յամայր ամս ձիգ
Եւ մեք նոցին ընդ հովանեաւ
Կեցցուք անդորը խաղաղիկ։

9 Էիցս էակ Որ էն հաստչին,
Փառս մատուսցուք Աբարչին
Ծալ պարգեւել Վեհիցս կրկին
Օր երջանիկ, կեանք անդին։

Նոյն օրը գալոցի այցելութիւնից յետոյ՝ Նորին Վեհափառութիւնը նահանգապետի, քաղաքապետի և բոլոր իշխանաց հետ գնաց Բալախանի անունով նաֆթահանքը՝ նաֆթահորերը տեսնելու, ուր պ. Ս.ռաքել Ծատուրեանցը պատրաստել էր մեծ հիւրի համար վայելուչ ճաշ։ Վեհափառ Տէրը գործարանատէրերին յատուկ յորդորեց՝ վարուել իրանց մշակների հետ խնայողութեամբ և սիրով. չափից դուրս չը բանեցնել, մանաւանդ թէ չզրկել՝ վարձերը կտրելով, որ մեծ մեղք է։ Գործարանատէրերը խոստացան կատարել Նորին Օծութեան պատուէրը. իսկ բանւորներին, որոնք բազմութեամբ ներկայացան Նորին Վեհափառութեան, պատուիրեց որ նուիրեն իրենց անձը գործին։ Սիրով աշխատեն, հեռու մնան շռայլութիւնից և ամենայն անկարգութիւնից. ազատ օրերը նուիրեն իրանց Աստուածպաշտութեան, աշխատած գրամների մեծ մասը իրանց ընտանեացը ուղարկեն. ապա օրհնեց նոցա աշխատանքը, պարապմունքը, և՝։

Երեկոյեան 7 ժամին Վեհափառ Տէրը և բոլոր մեծամեծները վերադարձան Բագու։ Իսկ Մ. Ընկ. գրատունը կիւրակի օրը գնալով օրհնեց նորա հիմնադրին, որ է Ռոստոմեանը, և յանձնեց նորա պատկերը մեծ դիրքով պահել գրատան մէջ, մանաւանդ թէ նորա կիսարձանը պատրաստել տալ։

Նոյն երեկոյեան պ. Դ. Ղազեան ներկայացրեց Նորին Օծութեան փայտի վերայ քանդակագործած մի ձեռագործ պատկեր, որը ներկայացնում է տեղւոյս կայարանը (վակզալը), որը էջմիածնայ թանգարանում պահելու արժանաւորութիւն ունի։ Բագուի հա-